**ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄԸ, կանխասացված Տիրամոր կողմից Գարաբանդալում 1961 թվականին, տեղի կունենա շուտով, որ փրկի աշխարհը:**

# ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ

Նոր մարգարեությունները, որոնք ստանում է Եվրոպայում մի տեսանողուհի, բացահայտում են գլոբալ իրադարձություններ, որոնք առաջնորդում են դեպի Երկրորդ Գալուստը:

### ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՈՐՊԵՍԶԻ

• ապացուցի բոլորին, որ Աստված գոյություն ունի,
• ետ բերի յուրաքանչյուրին դեպի Հիսուսը և ճշմարտության ճանապարհը,
• նվազեցնի մեղքի և չարիքի ազդեցությունն աշխարհում ապաշխարության միջոցով,
• օգնի մեզ փրկվել նախքան վերջնական դատաստանի օրը` տալով մեզ հնարավորություն, որ թողություն խնդրենք մեր գործած մեղքերի համար,
• դարձի բերի չհավատացողներին, ովքեր փրկության հնարավորություն չէին ունենա առանց գթասրտության այս մեծ գործողության,
• հզորացնի հավտացողների հավատքը:

### ԻՆՉ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



- 7 տարեկանից բարձր յուրաքանչյուր ոք կունենա անձնապես խորհրդավոր հանդիպման փորձառություն Հիսուս Քրիստոսի հետ, որը կտևի մինչև 15 րոպե:
- Սա մի ընծա է Հայր Աստծո կողմից` դարձի բերելու համար մարդկանց դեպի ճշմարտությունը: Դա այն է, ինչ տեղի կունենա Վերջին Դատաստանի Օրը, միայն թե այս անգամ դուք չեք դատապարտվի: Դրա փոխարեն ձեզ հնարավորություն կտրվի թողություն խնդրել:
- • Երկու գիսաստղ կբախվեն երկնքում:

• Մարդիկ կկարծեն, թե դա աղետաբեր կլինի, երկրաշարժից էլ վատ: Բայց դա այդպես չէ – դա մի նշան է, որ Հիսուսը եկել է:



• Երկինքը կարմիր կդառնա: Այն նման կլինի կրակի, իսկ հետո երկնքում կտեսնեք մի մեծ խաչ՝ ձեզ նախապատրաստելու համար:
• Աթեիստները կասեն, որ դա գլոբալ պատրանք (իլյուզիա) էր: Գիտնականները կփնտրեն տրամաբանական բացատրություն, բայց ոչ մի բացատրություն չի լինի:
• Այն կլինի տպավորիչ, սակայն չի վնասի մեզ, քանի որ դա գալիս է որպես Սիրո և Գթասրտության գործողություն Հիսուսի կողմից:
• Մեր մեղքերը ցույց կտրվեն մեզ, և մեզ իսկայական վիշտ և ամոթ կպատճառի, երբ դրանք բացահայտվեն մեզ: Ոմանք այնքան վատ կզգան և շոկի մեջ կընկնեն այն բանից, թե ինչ ձևով են իրենց մեղքերը բացահայտվում իրենց, որ մեռած կընկնեն նախքան կհասցնեն թողություն խնդրել:

• Յուրաքանչյուր ոք կտեսնի Աստծո առջև իր հոգու վիճակը – այն բարին, որն արել են իրենց կյանքի ընթացքում, այն վիշտը, որը պատճառել են ուրիշներին, և այն ամենն, ինչ չեն արել:
• Շատերը ծնկի կգան և կլացեն թեթևացման արցունքներով: Ուրախության և երջանկության արցունքներով: Զարմանքի և սիրո արցունքներով:
• Քանի որ վերջապես դրանից հետո հնարավոր կլինի ապրել մի նոր կյանքով, երբ կիմանանք ամբողջ ճշմարտությունը:

Հիսուսը հիմա խնդրում է յուրաքանչյուրին, որ աղոթեն այն հոգիների համար, ովքեր կմահանան շոկից մահացու մեղքի մեջ: Այժմ բոլորը նախապատրաստվելու կարիք ունեն: Հիսուսը խնդրում է, որ բոլորն իրենց մեղքերի համար թողություն խնդրեն նախքան Նախազգուշացումը:

www.thewarningsecondcoming.com